

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մրցույթների և աճուրդների կազմակերպման ու անցկացման հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մրցույթ:
 Մրցույթը տեղի կունենա 2021թ. մայիսի 17-ին՝ ժամը 11:00-ին, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 22, Վանաձորի համայնքապետարանի շենքի 4-րդ հարկում, դահլիճում:

ՄՐՑՈՒՅԹԻ ԵՆ ԴՐՎՈՒՄ

Լոռի անվան ումը	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը	Մակերեսը քմ	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների ներառյալ սերվիտուտ. առկայությունը	Ճանապարհների առկայության մասին տվյալներ	Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Վարձավճարի մեկնարկային գինը
1ա.1	Աբովյան փողոց, թիվ 75-3/1	06-001-0470-ից	200,8	Այգեգործական նպատակների համար /10 տարի ժամկետով/	չկան	Աբովյան փողոցին կից	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	տարեկան 4016 դրամ
1ա.2	Նիզամու փողոց թիվ 55/3-3	06-001-0511-ից	331,6	Այգեգործական նպատակների համար /10 տարի ժամկետով/	չկան	Նիզամու փողոցին կից	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	տարեկան 6632 դրամ
1ա.3	Բաղրամյան պողոտա, թիվ 21/11-1	06-001-0053-ից	450	Այգեգործական նպատակների համար /10 տարի ժամկետով/	չկան	Բաղրամյան պողոտային կից	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման Փաստաթղթերի	տարեկան 9000 դրամ
1բ.1	Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 25-5/5	06-001-0268-ից	436,4	Կարուսեղների, ատրակցիոնների և այլ զվարճանքի խաղերի համար /10 տարի ժամկետով/	չկան	Կ. Դեմիրճյան փողոցին կից	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	ամսական 34912 դրամ

Մրցույթի ամսական կամ տարեկան վարձավճարի մեկնարկային գները սահմանվում են Վանաձոր համայնքի ավագանու որոշման համաձայն:
 Մրցույթի մասնակցելու համար անհրաժեշտ է մրցույթների և աճուրդների կազմակերպման ու անցկացման հանձնաժողով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր, և Վանաձորի տեղական զանձապետական բաժանմունքի 900235401453 հաշվարկային հաշվին վճարված 25000 (քսանհինգ հազար) դրամի՝ մրցույթին մասնակցության վճարի մուծման անդորրագիր, իրավաբանական անձինք՝ նաև հիմնադիր և լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև այդ փաստաթղթերի և ղեկավար անձի անձնագրի պատճենները:
 Մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
 Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին մինչև 2021թ. մայիսի 11-ը ժամը 18:00: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վանաձորի համայնքապետարանի մրցույթների և աճուրդների կազմակերպման ու անցկացման հանձնաժողովին: Հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա 22:
 Հեռ. (0322)4-66-10